«Աջակցություն գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը»

Ընդհանուր տեղեկություն

Ոլորտ:	Գյուղատնտեսության զարգացում
Տևողություն:	4 տարի
Իրականացման ժամկետ:	2015-2018
Ընդհանուր բյուջե:	25 մլն եվրո
Բյուջետային աջակցություն:	20 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն:	5 մլն եվրո

Ծրագրի նկարագրությունը

Նպատակը. Աջակցել Հայաստանի կառավարությանը արդյունավետ և կայուն գյուղատնտեսության ապահովմանը՝ նպաստելով Հայաստանի գյուղական վայրերում ավելի լավ պայմանների ապահովմանը, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության 2010-2020թթ. գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության» իրականացմանը:

Հատուկ նպատակներ.

Նպատակ 1-ին. Աջակցել կառավարության՝ գյուղատնտեսության կայուն զարգացման եւ պլանավորման ազգային ռազմավարության իրականացմանը՝ ներառյալ ազգային եւ տեղական պետական մարմինների կարողությունների զարգացումը, գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունների եւ քաղաքականության մշակման եւ պատրաստման կարողությունների զարգացումը, ինչպես նաեւ գյուղատնտեսության հետ կապված ակադեմիական հաստատությունների աջակցությունը:

Նպատակ 2-րդ. Աջակցել գյուղական բնակավայրերի զարգացմանը, ինչպես նաեւ գյուղացիների ասոցիացիաների եւ կոոպերատիվների զարգացմանը՝ ներառելով Հայաստանի մի շարք մարզերում՝ գյուղատնտեսական եւ ոչ գյուղատնտեսական, համապատասխան պիլոտային արժեքների ավելացման շղթաների նախագծումը:

Նպատակ 3-րդ. Աջակցություն հասանելի սննդամթերքի ապահովմանը գյուղատնտեսական միջոցների եւ փորձի կայուն աճող արտադրողականության եւ որակի բարձրացման, հետբերքահավաքային մշակման համակարգերի ամրապնդման, ինչպես նաև հողատարածքների կառավարման արդյունավետության բարձրացման միջոցով՝ հաշվի առնելով երկրի արտադրանքի համեմատական առավելություններն ու բացթողումները:

Նպատակ 4-րդ. Աջակցել ընդհանուր գյուղատնտեսական մարդահամարի վերամշակմանը, ինչպես նաեւ աջակցել գյուղատնտեսության առավել լավ վիճակագրական տվյալների հավաքագրմանը:

<u>Բարեփոխումների ոլորտը.</u>

- Գյուղատնտեսության ոլորտի հաստատությունների գործունեության բարելավում գյուղական զարգացման ռազմավարությունների եւ քաղաքականությունների մշակման, հողային եւ տարածքային պլանավորման ազգային եւ տեղական իշխանությունների կարողությունների հզորացման, տնտեսական եւ սոցիալական զարգացման ռազմավարությունների նախապատրաստման, գյուղատնտեսության ժամանակակից բիզնես մոդելների ներգրավման, միջավայրի եւ կլիմայի փոփոխության հետեւանքները ուսումնական ծրագրերում ներգրավելու միջոցով:
- Գյուղացիների ասոցիացիաների եւ կոոպերատիվների կարողությունների եւ գործառույթների հզորացում համապատասխան օրենսդրության, գյուղացիների համար նորարարական ֆինանսավորման հնարավորությունների զարգացման, հայաստանյան գյուղատնտեսության եւ սննդամթերքի համար տեղական եւ միջազգային շուկաներ մուտք գործելու հնարավորությունների մատչելիության բարելավման եւ քաղաքական որոշումներ կայացնելուց գյուղացիների ասոցիացիաների մասնակցության կարողությունների բարձրացման միջոցով:
- Հայաստանի քաղաքացիների համար սննդի հասանելիության և մատչելիության բարելավում, շրջակա միջավայրի, կլիմայական փոփոխության եւ գյուղատնտեսական լավագույն փորձի ուսումնասիրություն՝ հողերի օգտագործման եւ բնական ռիսկերի կառավարման գնահատման կարողությունների բարձրացման եւ բնապահպանական անվտանգության հետ կապված պրակտիկայի բարելավման միջոցով:
- Գյուղատնտեսական վիճակագրության, վիճակագրական տեղեկատվական համակարգերի որակի բարձրացում եւ ազգային գյուղատնտեսական վիճակագրության անցկացում: